


Գրական Թերթ

ISSN 1829- 1627

ՀԱՅԱՍՏԱՆԻ ԳՐՈՂՆԵՐԻ ՄԻՈՒԹՅԱՆ ՇԱԲԱԹԱԹԵՐԹ * ՀՐԱՏԱՐԱԿՎՈՒՄ Է 1932-ԻՑ

Տղազրվում է ՀՀ Մեակույթի նախարարության աջակցությամբ

www.grakantert.am



Գևորգ Թումանյան
Սեպտեմբերի 30, ժամը 16:19ին

զևացի
անալայման հաղթանակած հետ վերադառնալու պայմանով

Մենք
Հայաստանն ենք պատմության խորքով եւ Արցախն ենք մենք լեռներու շունչով եւ Սփիւռք ենք մենք արեան թէժ կապով, Յաղթանակ ենք մենք միացեալ կամքով:

Մենք
Հայաստանցի,
Արցախցի խրոխտ եւ աշխարհացի
Սփիւռք մշտարթուն
Յանուն մեր արդար դատի
գոյութեան պահանջատէր ենք:

Մենք
Հաստատակամ
Աննկուն կամք ենք՝
Յարատեւութեան դարերու երթով:

Մենք
Հերոսներու շառաիղներ ենք,
Ազատամարտիկ՝ հրեղէն ոգով,
Յանրժի ճամբորդ յստակ հասցէով:

Մենք
Հաւատք ենք կոտ,
Անձնագոհութեան խորան խնկաբոյր,
Յանձնառարութեան կերոն լուսաթոյր:

Մենք
Հայրենաշունչ
Աննկուն ոգի Հայոց պատմութեան
Յոյսի ջահեր ենք մեր վեհ գոյութեան:

Մենք
Հրաշակերտ եւ
Արարչակերտ եւ
Յանրժակերտ ազգ ենք անձնուրաց:

Մենք՝
Հայկ նահապետի անվրէպ նետն ենք եւ
Արտաշէսի լեզուի պաշտամունք,
Յանուն Մեսրոպի մշակոյթ ենք մենք՝
յանձնուած դարերու անսահման երթին:


Մենք
Հայութիւն ենք եւ վեհ
Ազգութիւն,
Յարատեւութիւն առանց հարցումի:

Մենք
Հայ ենք, այո՛: Պարուրուած ենք մենք Կարմրաթոյր արիւնով
մեր վեհ պապերուն,
Անկաշկանդ թոհչքով Կապոյտ երկնքին՝
Յանուն հասկերու գոյնով Նարինջի:

Մենք
Հայու ոգի ենք անդրդուելի եւ
Անպարտուելի՝
Յաղթանակներու դափնիներ հագած:
Հայրենիքի Սուրբ Պարտքն է մեր ուղին,
Աստուծոյ միտուն է մեր ճակտին քսուած՝
կ'օժէ դարաւոր մեր վեհանձն հոգին,
Յոյզը վառ յոյսով պսակող ջահն է եւ լուսաւորող երթն մեր դարաւոր:

Մենք
ՀԱՅ ենք, այո՛: Երեք տառ միայն միաթիք խորհուրդով անհասկնալի:
Անցեալով հպարտ, ներկայով թրծուած,
Յոյժ յանրժիւն ենք հասցէագրուած:

Մենք...
ՀՈ՛, ԱՅԲ եւ ՅԻ՛ի ամբողջութիւնն ենք՝
ՀԱՆԱՏՔ ԱՆՆԿՈՒՆ եւ ՅԱՆԵՐԺԱԿԱՆ:



Հրանդ ՄԱՐԳԱՐԵԱՆ

Այիս ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ

Մտադրվել էի և հավատում եմ, որ մտածածս իրականություն կդառնա՝ ուսումնասիրել, կարեցածիս չափ նոր վերլուծություններ անել վաղամեռիկ հանճար Վարդան Գրիգորյանի պատմավեպերի շուրջ և հրապարակել նրա ծննդյան 70-ամյակի առթիվ: Բայց ներկայիս իրավիճակում, կարծում եմ, շատ հարմար է անդրադառնալ «Դար կորստյան»-ին:


մտորումներն են մահվան մահճում)... Ասում էին (մեր մեծամեծները), եթե ելնենք հոռոմոց բանակի դեմ, ջուր լցրած կլինենք Դվինի ամիրա Աբու-լ-Ասվարի և մեր մյուս թշնամիների ջրաղացին, նրանք կդաշնակցեն կայսրությանը և չորս կողմից վրա կտան մեզ: Հարավի անօրենները, որ առանց այդ էլ չեն հեռանում մեր սահմանային գավառներից, ավելի կլկտիանան և Անի էլ կհասնեն: Անօրենների այս համակ ծովում մի դաշնակից ունենք, եթե նրա դեմ էլ ելնենք, էլ ո՛ւմ

ԴԱՐ ՎԵՐԱԾՆՈՒԹՅԱՆ

Գայլ Արշավիրն իր մահվան մահճում, նույնիսկ անեծքների, նույնիսկ ատելության մեջ մեծ է: Մեծ է, քանի որ ամբողջ էությամբ, իր եղերական հետհայացքով կլանված է իր պարտության պատճառներն իմանալու դաժան, ողբերգական իրադարձություններն էլի ու էլի վերապրելով՝ հանուն ապագայի՝ իր սերնդի սխալները չկրկնելու պատվիրանը ավանդելու համար:

11-րդ դարակազմին հակասական, խառնիխուռն, միմյանց չհանաչող իրադարձությունների խառնարանում ամեն ոք, ամեն տերություն ուներ իր շահը, իր տեսակետը, իր գործը, դավաճանության և հայրենասիրության իր ընկալումը, ինչպես հիմա է: Գրեթե տարբերություն չկա: «Խոսքն անկարող էր միջնորդ դառնալ իր և այդ մարդկանց միջև, միևնույն է, չէին հասկանալու մեկմեկու (Արշավիրի

ապավինենք»: Մոռանում էին, որ ոչ թե իրենք, այլ հոռոմներն են եկել իրենց դեմ, նրանք են ուզում նվաճել իրենց երկիրը, դարձնել կայսրության մի սովորական նահանգ: Իբր վախենում էին «հզոր դաշնակից կորցնել», երբ պարզ էր, որ միայն գահն ու անկախությունը պահպանելով կարող էին կայսրությանը դաշնակից մնալ, Անին հանձնելուն պես հպատակ էին դառնալու: Վաղուց հպատակություն չէին տեսել, մոռացել էին, թե որքան ծանր է հպատակ լինելը: Այնքան էին առուծախով զբաղվել, որ վաճառականի նման էին դատում: Կարևորը կայսրության հովանավորությունից չզրկվելն է, իսկ եթե ելնենք հոռոմոց բանակի դեմ, միևնույն է, հաղթենք էլ, հոռոմների հավերժական թշնամությունն ենք վաստակելու, ավելի շատ կորցնելու ենք, քան



Խաչիկ ՄԱՆՈՒԿՅԱՆ

ՀԱՂԹԵԼՈՒ ԵՆՔ

Ճեմասրահում
օսլայված բառեր
Եվ փողկապավոր
դեմքեր սիրասուն-

Սուրո՛ւմ են,
Շաչո՛ւմ են,
Պայթո՛ւմ են արկերը,

Եվ թոյնն առավել
ազնիվ հեղուկ է,
Քան խղճահարույց
արցունքը որձի,

Կրակահերթ է,
Հրո շքերթ է,

Արյո՛ւնն է ծորում,
Ցավո՛ւմ է վերքը,

Ետևում գյուղն է,
Իր սուրբ մատուռն է,

Շունչն է ծանրանում,
Բայց դեռ կարող է
Վերջին լարումով
հարվածը տա՛լ,

Ու գնդացիրը հերթով մաղում է
Արյան հոտ առած շակալներին,

Ցավը մոռացած՝
արդեն ժպտում է
Ու վիրակապն է
մարմնից պոկում,

ՇՈՒՇԻ

(մանկական)
Ինձ ասում են՝
Մեզ տուր Շուշին:
Շուշին ո՞նց տամ

Հիմա, երբ որդիդ սահմանին է,
Հիմա, երբ ռումբեր են պայթում,

Իմ պատմությունը
անավարտ մնաց,

Նայեցի՛
Հեռվում մի մայր էր սմբած,
Մի ֆիդայի էր
Ու մի աբեղա...

ՀԱՂԹԱՆԱԿ

Քեզ մոտեցել ենք ցավի՛ միջով,
Կորստի՛ միջով ու աղետի՛,
Մահվան ահի դեմ՝
մեր քրքիջո՛ւլ՝

ՃԵՐՄԱԿ
ՀՈՒՅՍԻ ՊԱՏԱՌ



Սոնա ԱՆՏՈՆՅԱՆ

Ինչի՞ց սկսել... Գիտեմ, իհարկե,
բայց այնքան շատ են այդ
խորհրդանշական սկիզբները...

Ինչ շքեղ բան է պապ ունենալը.
մանկուց այդպես եմ
մտածել: Հիմա էլ:
Պապերս՝ Եղեռնից մազապործ,
Մեծ հայրենականի զո-

Իմ սերնդակիցներից շատերը
Եղեռնից հրաշքով
փրկվածների թոռներն են:
Իմ սերունդը պատերազմ մերժող,
հայրենիք երգող,
հրապարակներում շքերթների
մասնակցող սերունդն է եղել:



Գահիկ ԴԱՎԹՅԱՆ

ՎԱՍՆ ԼՈՒՅՍԻ

ԵՎ ԽԱՂԱՂ ԴԱՐԵՐԻ

Տե՛ր, քաղցր պահիր աչքը մեզ վրա, դավանավորն ենք մենք քո հավատի, յուզ մի քսիր սրտին այսապաշտ և զարմը վատի հատիր արմատից...

Հալածիր, Գթա՛ծ, տեղատարափը ցավ ու վշտերի, քողը խավարի ու շուքը մահվան երկնքից վանիր, խափանիր, Արդա՛ր, կորստյան խորհուրդն ամբարիշտների և թունոտ լեզուն կացրու քիմքին ամբարտավանի...

Հակիր ոճրարար մտքերը նրանց և նրանց հանդեպ եղիր աններում, խճճիր, Վերի՛ն, ոտքերը նրանց իրենց հորինած որոգայթներում և զորությունը ցուցանիր նրանց քո տերունական հրաշք մականի,

Տե՛ր, այնպես արա, որ ցնդեն հավետ աղբյուրները մեր ողբ ու կականի...

Տե՛ր, բարի գիշեր, խաղաղ գիշեր ենք ուզում քեզանից, որ վտակները մեր երազների խառնվեն իրար ու դառնան գետեր, որ խորշակահար տոհմածառը մեր ընծյուղ տա կրկին ափունքին նրանց, և ընծյուղների մշտնջենական Լույսը բողբոջի գիշերվա մեջ, Տե՛ր, Լույսը խափանված, Լույսը վիրավոր ու սմբակահար, Լույսը որպես գիր ու որպես աղոթք ու որպես ցորյան, Լույսը որպես սեր, Լույսը որպես խիղճ ու որպես մանուկ, և ուզում ենք, որ անվորդվ լինի առավոտը մեր հանապազօրյա...

Տե՛ր, բերկրություն տուր մեզ այնքան տարի, որքան աշխարհում տեսել ենք չարիք, տուր խաղաղություն մեզ այնքան դարեր, որքան աշխարհում Լույս ենք արարել:

Ա՛խ, ԻՄ ԱՎԱԳՆԵՐ, Ա՛խ, ԻՄ ԶԱՎԱԿՆԵՐ...

Ա՛խ, իմ միամիտ, իմ հավատավոր, ա՛խ, իմ հեռավոր, մերձավոր պապեր...

Ա՛խ, քանի անգամ, քանի հեյուզակ, քանի՛ - քանիսիդ աչքերն են կապել, քանի՛ - քանիսն են սնախոսությամբ անառաքինի մեր հացը լափել, քանի՛ - քանիսն են հավատարմության սուտ երդումներով մեր գինին ըմպել, սակայն թիկունքն են ցուց տվել իրենց, երբ մեր երկինքն է մի փոքր ամպել...

Ա՛խ, քանի՛ - քանի թշվառականի փառքով ու պատվով իր տունն էք ճամփել, քանի անգորի, քանի հզորի փրկության համար նծույգ էք թամբել, և քանի՛ - քանի օտարականի ծվատող ցավով քանի գիշեր էք անքուն տառապել, քանի կեղծավոր դրացու համար քանի օվկիանոս արյուն էք թափել, իսկ նրանք անգամ մեզ չեն ճանաչել, չեն էլ հառաչել, երբ շառաչել է մեր զլխից վերև հողը մահաբեր...

Ա՛խ, իմ միամիտ, մանկամիտ պապեր, իմ հեռավորներ, իմ մերձավորներ, ա՛խ, իմ ավագներ, ա՛խ, իմ... գավակներ, ա՛խ, կայեններով լիքն այս աշխարհում դեռ ինչքան պիտի դուք մնաք... Աբել...

Դարձյա՛լ պատերազմ է: Մեր հնագույն և հնուց անտի՛ աշխարհի կողմից «ՍՐԲԱԶԱՆ ԾԵՍԵՐԻ ԵՎ ՕՐԵՆՔՆԵՐԻ ԵՐԿԻՐ» ճանաչված հայրենիքի նկատմամբ նորից ու նորից այն ճղոտել փորձող պճեղահոտ բաշխողականների՝ մի կերպ իրար վրա բերված և ընդամենը մեկ հարյուրամյակով չափվող ու հորինված պատմության տեր դարձված, անապատական մոր պղտոր կաթի հետ ուրիշի ստեղծած ԻՆՉՔԻՆ, ՀՈՂԻՆ... ՊԱՏՄՈՒԹՅԱՆԸ տեր դառնալ փորձող ապօրինածին հետնորդների ու անհավատ գող բորենիների սանձազերծա՛ծ պատերազմ: ԻՆՉՔԻՆ, ՀՈՂԻՆ ու... ՊԱՏՄՈՒԹՅԱՆԸ... Եվ իրենց եղնազափ ուղեղով չեն հասկանում, թե ինչպես էլ այն եղծեն ու խեղեն, դրա յուրաքանչյուր, նույնիսկ եղծված ու խեղված տողից, բառից ու... կետադրությունից իսկ՝ ՀԻՄԱ, ՎԱՂԸ ԵՎ ԴԱՐՁԴԱՐՁԻԿ ԲՈՒՈՐ ԺԱՄԱՆԱԿՆԵՐՈՒՄ դուրս կցայտի իսկությունը, քանզի եթե մենք էլ լռենք՝ կխոսեն այս փոքրացված, բայց ՄԵՇ ԵՐԿԻՐԻ քարերն ու դրանց ՍԵՊԱԳԻՐ ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ, կարագի նման՝ ժայռերից հատված ու հղկված մեր ԱՄՐՈՅՆԵՐՆ ու ԲԵՐԴԵՐԸ, մեր ՁԵՌԱԳՈՐԾ ՏԱՃԱՐՆԵՐԸ, և կամ՝ աշխարհի թանգարաններում աչքի լույսի նման պահվող մեր, նաև այլոց ստեղծած մատյանները, որ, ըստ ուշիմ «քաղղեական և հունական հնագույն գրություն մեջ վարժ ասորի Մար Աբաս Կատիսայի»՝ Նինվեոմ գտնված և նախ՝ քաղղեերենից հունարենի և այնուհետև՝ Ալեքսանդր Մակեդոնացու հրամանով, հայերեն թարգմանված բուն հնեբնի և նախնիների պատմության. «...վայելչակազմ, թիկնավետ, գեղազանգուր, վառվռուն աչքերով, հաստաբազուկ ՀԱՅԿԻՑ»՝ մինչև օրս, մեր անկտորում տեսակը կենդանի պատվար է կանգնել ԻՐ ՏԱՆՆ ու ԻՐ ՀՈՂԻ- ՀԱՅՐԵՆԻԻՆ... Եվ մենք այսօր դիմում ենք Ձե՛զ՝ ոչ թե ՔՍԱՆԱՄՅԱ, այլ՝ հավերժորեն երիտասարդ և հավերժորեն ՔՍԱՆՀԱՋԱՐԱՄՅԱ՝ ԱՐԵՎԱՇՈՂ ՈՒ ԱՐԵՎԱՐՈՒՅՐ, ԻՄԱՍՏՆԱԳՈՒՅՆ ՀԱՅՈՐԴԻՆԵՐ, ում ոտքի տակի ցեխը լինելուն անարժան չմարդու և իր նմանակ ու ծախու ելնող վարձկանի գնդակից հայրենի հողին ընկնող ՁԵՐ ԹԱՆԿ ԱՐՅԱՆ յուրաքանչյուր կաթիլից հառնելու են Ձե՛զ և միայն Ձե՛զ նման ՀՐԱՇԱԼԻ՛ ու ԱՆՊԱՐՏ ԶԱՎԱԿՆԵՐ: Եվ ինչն է, որ Ձե՛զ հե՛տ են ու Ձե՛զ պատվար՝ ՄԵՐ ՀԱՎԱՏԸ, ՀՈՒՅՍԸ ԵՎ ՍԵՐԸ, և ՁԵՐՆ ԵՆ ՁԵՁ ԾՆՈՐՀՎԱԾ ԶԱՆԱՊԱՐՀԸ, ՃՇՄԱՐՏՈՒԹՅՈՒՆՆ ՈՒ ԿՅԱՆՔԸ, քանզի՛ Ձե՛զ ՀԵ՛Տ ԵՆ ՄԵՐ ՀԱՆԱՊԱՋՐՅԱ ԱՂՈՒԹՆԵՐԸ:



Սարգենիկ ՄԿՐՏՅԱՆ

ՀԱՅ ԶԻՆՎՈՐԻ ՎԱՐԺԱՆՔ-ԵՐԱԶԱՆՔԸ
Վարժանք եմ անում Եվ ինքնօրինեգում, Որ հավերժադիր Սուրբ հողը հայոց Ինձ գիրկն իր չառնի Իբրև անանուն, Հող դարձող անուն՝ Մշտնջենանինջ: Այլ հանց երկնավոր Սրաթև թռչուն, Որ երկններկինք է Միայն իջնում, Գա, փոշի դառնա՛ Ոսկեզօծ փառաց, Դառնա շնչավոր

Ոգու Զվարթնոց... Վարժանք եմ անում Ու լուսինն խղճում:

ՄԵՇ ՍՊԱՍՈՒՄ
Օ՛, իմ Արարատ, Այսպես քանի՛ դար՝ Ես անժամահար Քո դեմ միշտ կանգնած ու ծնկի իջած, Պիտի չհապաղեմ՝ անշարժ քեզ հասնեմ, Քարկոծվեմ խաչով ու քարարձակվեմ, Շաղ տամ փեշերիդ ծաղկունքը քարե, Եթերադաջվեմ քո դեմքին հավերժ...



Բագրատ ԱՎԵՏՅԱՆ

ԱՆՎԵՐՆԱԳԻՐ
Հյուր էր ծովին: Մայրամուտ էր ու փոթորիկ: Հորիզոնը՝ սև, թե՛ կարմիր: Արեգակը՝ նռնակարմիր: Հարցդ ասա, ո՛վ դու հեգ հյուր, Որ մեր թևին քեզ հասցնենք տիեզերքի գաղտնախորհուրդ ականքներին, Ծեծում էին ծովաժայռը ալիքներն ու ծորունք, ցայտունք


հասնում էին քուրմ աստղերին. Սգակիր մոր հարցն է հարցս, Կա՛ պատասխան, Թե՛ այն դուրս է տիեզերքից...

Մայրամուտ էր ու փոթորիկ: Սգակիր մոր սև, թե՛ կարմիր՝ Ծովը սուզվող արեգակի՛ ուսից ընկած Նռնակարմիր շալն էր իջնում հորիզոնին: Շատ էր տխուր: Հյուր էր ծովին...



Վալերի ՊԱՐԱՆՅԱՆ

ԼՌՈՒԹՅԱՄԲ ՀՈՏՆԿԱՅՍ
Դեռ չեն հնչում, Դեռ լռում են Հաղթանակի շեփորները խորիմաստ. Լռության խուլ դողանջներով, Դեռ սզում են, Նահատակին դիտապաստ: Կարմիր գոհը, Մաքառումի վեհ հերոսը, Սուրբ արյունով շահեց մարտը, Կռիվը հուսկ, Մեծ պայքարի Հաղթանակած ավարտը: Նահատակի սուրբ արյունի Փրփուրներով երկնաշող: Ոգեկանի լավան լափով Օծեց դաշտը բախումների, Ուր շիկացած կռիվ ու կագ, Կյանք ու մահվան հուր խառնուրդով Դարբնեցին կործանումները սնանկ, Կարծրացրին ճոխացումով Հաղթանակը սուղ ու թանկ: Դեռ լռում են Շեփորները հաղթության. Ու հոտնկայս Մի րոպե խոր լռությամբ Հարգում ենք զոհ, վեհ հերոսի Պատարագունը կյանքի, Որպես արյունոտ արմաղան Հաղթանակի կենսական: Լռության մեջ Միայն սրտեր են բաբախում. Կուրծքերի ու հոյզերի սուրբ ելևէջ:



Գրիշ ԴԱՎԹՅԱՆ



Անուշ ՎԱՐԴԱՆՅԱՆ

Ես համոզված եմ, որ հաղթանակը հեռու չէ, ու նաև առաջադեմ մարդկությունը իր ծայնն է բարձրացնում Հայաստանի օգտին, և այս պատերազմում հայ ժողովուրդը տանելու է իր հերթական հաղթանակը: Որովհետև Արցախյան հերոսամարտը մեզ սովորեցրեց, որ մենք հաղթող ենք:

Հայ զինվորի արյան միջով է գալիս քաջությունը, և եղիշեի. «Մահ իմացյալ անմահություն է» պատգամը արդիական է. երբ սկսվում է մարտը, հայ զինվորը վերածնվում է հանց հերոս...

Երբ սկսվեց Արցախյան հերոսամարտը, ինձ մեղավոր էի զգում, որ չեմ մեկնում առաջնագիծ. չէ՞ որ համալսարանում ուսանել էի բուժքույրական դասընթացներ, բայց փոքրիկ որդիներս խնամքի կարիք ունեին, և չգնացի:

Այսօր հայ մայրերը և քույրերը զենքը ձեռքին մարտնչում են:

Այս պատերազմում գրվեցին հերոսական բազում էջեր, որոնք հետագայում երգ ու գիրք կդառնան:

Արցախը Հայաստանի մուտքն է, մեր դրոշմը և մեր ինքնության հաղթարշավը: Այս պատերազմը համաշխարհային ռազմական հրապարակում ամենանոր զենքերի փորձարկումն է, որին դիմակայում է հայի արթուն միտքը:

Թուրքիան երբեք չի հրաժարվել պանթուրքիստական, ծավալապաշտական ծրագրերից. Կովկասով, Դաղստանով դեպի Միջին Ասիա, Մոնղոլիա թուրանական երկիր ստեղծելու պլանները միշտ գործում են: Եվ միշտ Հայաստանը կարծր ոսկրի պես խրված է նրանց կոկորդում:



Լիլիթ ԱՐՏՈՆՅԱՆ

ԱՇԽԱՐՀԸ ՄԵՋ ՀԵՏ Է, ԹԵԵՎ...

Ցեղասպան Թուրքիան ի վերջո հանեց ժամանակակից քաղաքակիրթ պետության սպիտակ ձեռնոցները՝ ցուցադրելով հարյուրամյակ ի վեր թաքցրած մագիլները, որոնց տակ հայկական արյունը դեռևս չէր չորացել: Չնայած դժվար չէր նրան նույնականացնելը՝ ելնելով երկար պոչից, որը ոչ մի տեղ թաքցնելու բան չէր: Քաղաքակիրթ աշխարհն այլևս ճանաչեց նրա դեմքն ու ինքնությունը: Գերակա զգացմունքը, որը Թուրքիան ունի, ի ցույց աշխարհի ներկայացնելն է, թե ի զորու է ոչնչացնելու դարավոր թշնամուն, որին ատում է, ինչպես իր նախնին՝ արաբական անապատների քոչվորների առաջնորդը, հույներին՝ Կոստանդնուպոլիսը գրավելուց առաջ: Սակայն խաղաքարտերը խաբեցին նրան, և Ադրբեյջանը, թեկուզև հարազատ հոգեզավակ, Արցախ աշխարհում բնավորվել չկարողացավ: Չի էլ կարողանալու երբեք, որովհետև, նախ, հայոց լեռներում նա անելիք չունի, և, երկրորդ, այնտեղ ապրում են իրական տերերը. Հայկական բնաշխարհը Բաբելոնի աշտարակաշինության ժամանակներից այսկողմ հայերինն է, և այստեղ որևէ գաղտնիք չկա: Սրանք պարզապես խոսքեր չեն, քանի որ հայ ժողովրդի պատմությունը, գենետիկան, մշակույթն անհաղթահարելի քաղաքակրթական հիմնավորումներ են, որպեսզի նրան հարգեն հյուսիսից հարավ և արևմուտքից արևելք: Բացի այդ՝ մահվան սարսափը նրան երբեք ետ չի պահել գոյապայքարից և չի պահելու, քանի դեռ Արարատը կա: Առաջադեմ աշխարհը դա լավ գիտակցում է: Ասվածն են վկայում նաև բազմաթիվ նամակները, որոնք ստանում ենք տարբեր հորիզոններից՝ որպես օրհասական տարածամի քաջալերում: Բայց մենք վրձնում ենք թուրք հրոսակներին, իսկ նրանք ոխակալ ներխուժում են: Ուստի՝ այլևս պետք է հետևություններ անել՝ ժամ առաջ օրինականացնելով Արցախի Հանրապետության ճանաչումը:

Մյուս կողմից՝ որքան շատ են թանկ կորուստները, և կորստի ցավը՝ որքան անամոքելի: Օրեր առաջ Եռաբլուրում հուղարկավորեցին մեր անզուգական հայորդիներից մեկին՝ Ալբերտ Հովհաննիսյանին: Նա Սլավոնական համալսարանի ուսանող էր: Հայ գրականության դասերին կարդում էր մեր ժամանակակից գրողների գործերը, խոսում անկախության կարևորությունից: Տղան խոհեմ, ներսույզ հայացքով հաստատում էր ասվածը, Կոմիտաս լսում: Մեր ընկերը, սակայն, հիմա հուշ է, տեղը լսարանում՝ թափուր: Եվ էլ չէք տեսնելու Ալբերտի շիկնած այտը՝ համակուրսեցի գեղեցկուհուն հանդիման...

Ես ուզում եմ գոռալ, որ ատում եմ այս ստոր պատերազմը և պահանջում եմ այն հրահրողների «նյութերգայան» վերջաբանը:

Համբերություն քեզ, հայ՝ ժողովուրդ, աշխարհը քեզ հետ է:



Թադևոս ՏՈՆՈՅԱՆ

Բայց Գիրն հուշում է, որ երկրից երկինք Հայաստանով է ետդարձի ճամփան:

ՀԱՅԱՍՏԱՆ

Այստեղ իմ ցեղի սերմերն են պահվում Որպես վաստակի քրտնակաթիլներ, Սերունդներն այստեղ միշտ հողն են բահում Այն ազնվությամբ, որ մոր կաթինն է:

Երբ աստվածները նոր էին բարն ու Բանը արտոնում մեզ՝ որպես ընծա, Իմ ցեղն իր ամեն, ամեն բարբառում Որպես հաց՝ Տիրոջ ձեռքերով հնձած,

Իր խոսք ու գիրն էր արդեն ամբարում Եվ ուներ արդեն պատմության հնձան՝ Ծնունդից ի մահ, մահից համբառում, Ու կյանքի՛, կյանքի՛, կյանքի՛ համառում:

ՀԱՅԱՍՏԱՆ

Սիսական ջոկատի լեգենդար հրամանատար Աշոտ (ազդակունջ՝ Երկաթ) Մինասյանին

Փուշ ու տատասկ՝ քո սրտի մեջ. Ու մի փամփուշտ, կենտ մի փամփուշտ, Քեզ լուր բերեց քո տղերքից Լուռ, տարածամ ժամի մի ուշ, Թե ախպերդ դաշտում կռվի Աչքը փակել ու մահի դեմ Սիրտը բացած՝ մինչև Քո Սահման ափն է հասել արդեն Իր սև ձիով, որ Արտաշես Թագավորին արծիվ եղավ Մի անգամ, երբ Խորամանկել ուզեց նրան Կեռ թշնամին Անարդարերթ:

ՀԱՅԱՍՏԱՆ

Այստեղ նոր խոսքը Մոռացնել չի տալիս նախորդը, Որովհետև այստեղ ծայնն է ապրելու նշանը, Ու լռությունը՝ մահվան: Այստեղ միշտ ավելի ուժեղ ցավը Մոռացնել է տվել ավելի թույլը, Ու նոր վերքն է եղել ապրելու նշանը:

ՀԱՅԱՍՏԱՆ

Երգասությունն է մնում լեզվից լուկ, Ինչպես մարդկանցից՝ հին ճամփաներին Երևի միայն հոգիներ, որոնք Չունեն այլևս կարիքը բառի, Որոնք Ճամփորդի հավանորդներ են, Ճանապարհների հովանավորներ, Որոնք մի կյանքում ճանապարհող են, Իսկ մյուս կյանքում՝ դիմավորողներ...

ՀԱՅԱՍՏԱՆ

Հայաստանով է ճանապարհն անցել Երկնքից երկիր, Երբ Աստված մարդուն կյանքն արեց շնորհ Ու տվեց նրան երազը Ցանքի և ուժը Հերկի Ու Գիտելիքին դարձրեց Հաղորդ: Մարդը բավիղում իր անփակ Վերքի Դեռ դեգերում է աշխարհում Անբան,

ՀԱՅԱՍՏԱՆ


Վարքն ապրողի դեռ հեռու է, ավա՛ղ, Ննջեցյալների կյանքից անավարտ, Բայց հայրենիքն իմ, Երկնքից կախված, Դեռ պատանում է Հոգի ու Հավատ: Աշխարհը վաղո՛ւց դարձել է ավարտ, Մի՛ մոռացիր, որ դու միշտ քո տանն ես, Երկինքը վաղո՛ւց, վաղո՛ւց էր ավար, Որ էլ որ գնաս, Միշտ Հայաստան է:

ՀԱՅԱՍՏԱՆ

Ես մտածում եմ մեն-մի Հայաստան՝ Տանս չափ, բոլո՛ր հայերի համար, Համառ օրենքով, երկնքով վստահ, Ստահակվածի խոհերից ազատ, Տանիքների տակ՝ առնական ուներ, Ու սեր մանկածին, տիեզրի Նորմարդ, Արդարության հետ նաև արու սեր՝ Ուսելու համար գրերը հուսատ: Ուսելու համար գրերը հուսատ Ես մտածում եմ մեն-մի Հայաստան, Ստահակվածի խոսքերից ազատ, Տանս չափ, բոլո՛ր ազգերի համար...

ՀԱՅԱՍՏԱՆ

Քո զավակները՝ Լեռներդ, դեռ կան, Դեռ ո՛չ մի, ո՛չ մի Քայլ չեն ընկրկել, Նրանց պարն, ինչպես Պատումդ երկար, Տիեզերքն է ողջ Ուզում ընդգրկել Ու կրքից ազատ, Գրքերիդ ճամփով Քեզ փրկե՛լ, Փրկե՛լ: Քո զավակները՝ Լեռներդ, դեռ կան, Քեզ, որպես մանուկ, Բարուրել են ու Գրկե՛լ են, Գրկե՛լ:



ԸՆԴՎՁՈՒՄ

Մեր երգերին նորից հառաչ է խառնվում,
Մեր աղոթքը դառնում
նզովք մի սրբազան,
Էլի՛ ցավ ու մորմոք, էլի՛ ոխ ու ցասում,
Էլի սև լուրերի արշավանքը դաժան:

Բայցև բռննցքվում են մեր
սրտերը նորից՝
Սուրբ կանչերի ներքո փառապանծ
մեր նախնայաց,
Ու մեր երակներում արյան պտույտն էլի
հոլ հորձանք է առնում՝
նոր կռվին ընդառաջ:

Լևոն ԲԼԲՈՒԼՅԱՆ

Հայոց ոգու վսեմ արծիվն է խենթ ճախրով
Սրտից սիրտ ու հոգուց հոգի թևում անտես՝
Արդար ցասումը մեր ուժի փոխարկելով,
Ցավի մեջ վառելով ընդվզման հուրը կեզ:

Եվ հուրն այդ այսուհետ չի մարելու բնավ,
Ուժն այդ աճելու է, հորդի համատարած,
Քանի ոռնում է դեռ գազանը ղխակալ՝
Երախը մեր տանն ու մեր երկնքին պարզած:

Քանի մխում են դեռ արնոտ ժանիքների
Թողած սպիներն հին, ցավոտ վերքերը նոր,
Ու կեռ ճանկերը հենց որջում իր գազրելի
Չեն հատվել մեր վերջին, վրիժառու զարկով...

Հուրն այդ կբոցկլտա՛, ուժը կվարարի՛,
հոլ կսուրա հայոց ոգու արծիվն անվերջ,
Ու նրա թևերի շայյունը ամեհի
Պիտի հնչի գալիք բոլո՛ր դարերի մեջ:

ԱՐԵՎԻ ԶԱՅՆԸ

Ինձ երգեր եք ծոնում,
Երգվում եք ինձնով,
Իմ անունով կնքում մաքուր, անբիծ մանկանց...
Հարկավոր չէ, սակայն, ինձ մի՛ երկրպագեք.
Չե՛մ կարող դեռ նույն կերպ ժպտալ ես ամենքին:

Մի՛ ծոնեք ինձ երգեր.
Իմ հայացքի տակ կեզ
Չարի ծաղիկները չեն խանձվում իսպառ,
Ու մերկ հոգիներում խավարը լերդանում,
Մահու թույն է դառնում դեռ աշխարհի հանդեպ...

Մի՛ երգվեք ինձնով.
Ինչ-որ տեղ դեռ ոմանք
Գողանում են լույսն իմ,
Որ... այս երկրի վրա փռեն անդուռ գիշեր...
Արյունոտ է սերը ինչ-որ տեղ ու լքված,
Ու երգեր կան բանտված, անթիվ որբ երազներ...

Ու թե իմ անունով
Կոչում եք ձեր մանկանց,
Մի՛ մոռացեք երբեք՝
Նրանց վրա մի ժանտ ձեռք է ճոճվում անտես,
Ու սարսափի դժիկ շուքն է դեռ երերում
Նրանց պայծառ, մաքուր երազների վրա...

Ինձ երգեր եք ծոնում,
Երգվում եք ինձնով,
Իմ անունով կնքում մաքուր, անբիծ մանկանց...
Դե ուրեմն լսե՛ք,
Լսե՛ք կոչն իմ, մարդի՛կ.
- Զարկե՛ք մեկտեղ ու այդ արյունոտ ձեռքը հատե՛ք:

ՅԱՍՈՒՄ

(ըստ Գ. Գոլովատիի)

Կոյրը չի՛ կարող ցասումով նայել,
Համրը չի՛ կարող գոչել ամեհի,
Ձեռքից գրկվածը՝ զենք-գրահ պահել,
Եվ ով ոտք չունի՝ նետվել գրոհի:

Բայց կարող է կոյրն ամեհի գոչել,
Համրը՝ նայել խենթ ցասումով լի,
Ոտքից գրկվածը՝ ձեռքին զենք պահել,
Եվ ով ձեռք չունի՝ նետվել գրոհի՛:

ՍԱ ՄԵՐ ԿՈՒՎՆ Է

Գնո՛ւմ ենք դարձյալ...
Ազգովի գնում ենք,
Գնում ենք մենք թե՛ առաջնագիծ.
Մեր և՛ կյանքը, և՛ գլուխը դնում ենք՝
Պահպանելու մեր պատիվն անբիծ...

Սա մեր կռիվն է, մեր մեծ գոյամարտը,
Մեր պատերազմը Հայրենական.
Մեր արժեքներն են
Հայրենիքն ու Մարդը,
Մենք՝ թշնամու դեմ պայթող ական...

Մեր թշնամին՝ ի՞նչ...
վերստին նույն թուրքն է,
Ցեղասպան թուրքն է արյունարբու...
Հե՛յ, աշխարհ,
թուրքը ճակատիդ սև թուրքն է,
Մարդկության թուրքը...
ո՛ւմ եք խաբում...

Սա մեր կռիվն է. գնում ենք մենք նորից՝
Պաշտպանելու մեր հող-հայրենին.



Անահիտ ԹԱՐՅԱՆ

Ով իր գեներ ազնիվ ժառանգել է հորից,
Նա մեզ հետ է միշտ, բարձր է ոգին...

Սա նոր Ավարայր,
Սարդարապատ է նոր.
Մեր հողից ո՛ւր ենք մենք գաղթելու...
Գնում ենք կռվի. մեր հավատն է հզոր,
Մենք կռվելու՛ ենք և հաղթելու...



Լենա ԱՆԹԱՌԱՆՅԱՆ

* * *

Ի՞նչ բառերով,
Ի՞նչ արցունքով
Կիսեմ վիշտը
Ընկածների,
Որ մեղմանա
Տառապանքը
Մեր մայրերի:

ԱՆՁՐԵՎՈՏ ՕՐԵՐ

Կյանքը մեռնում է սիրո կորստից...
Հուսահատության տերևաթափից,
Անվերջ պոկվելով
Մայր արմատներից՝
Սառնությամբ ծյունի
Բարձրանում է վեր,
Որ չտրորվի օտար ոտքերից...
Կյանքը մեռնում է սիրո կորստից...

* * *

Թե քարերը ծաղկեն
Յասամանի տեսքով,
Եվ ջրերը խոսեն
Աստվածների լեզվով,
Ես Մարիամին կասեմ՝
Հրաշքդ շատ է հին,
հավարը կհագնեմ
Եվ կփրկեմ լույսին:
Թե երգերը մարդկանց
Դառնան խոտ ու ծաղիկ,
Ծեր լուսինը հանկարծ
Անէանա մանրիկ,
Ես Մասիսին կասեմ՝
Քեզ ո՛վ խաչեց, իմ ո՛րբ,
Չարերն ինչքա՞ն ապրեն
Հողի վրա այս բորբ:

* * *

Ուրվականներին ես չեմ հավատում,
Չնայած նրանք
Տանում են խաչն իմ
Հողմերով ծեծված
Շանթ կայծակների
Խրձերի միջով:
Դրոշակներով խելագարվածի,
Աստծո փեշերը գրկած ծնկաչոք՝
Ուրվականներին ես չեմ հավատում,
Որոնք դիվահար
Վայնասուններով
Լցնում են հոգիս
Ցավն ատելության,
Կապկպում լեզուն
Մերկ ճշմարտության,
Եվ արհամարհած
Խոփը գութանի՝
Հրանոթներով հերկում են հողը...
Ես, շրջապատված ուրվականներով,
Չեմ տեսնում նրանց...

ՕՐԵՐ

Իմ օրերը բեռնած
Ժամանակի դավով,
Խոհերս տագնապած
Ծիծաղելով, լացով
Մեղքի թողություն են
Խնդրում անվերջ:
Եվ, չգիտեմ ինչու,
Անմեղ մեղքերը կան,
Թողությունը չկա:

ՀԱՆԵՔ ՄԵՆԸ ՀԻՆԳԵՐՈՐԴ

Շատ մի՛ տխրիր, սիրելի՛ս...
Ես քաշում եմ մեխերը
Քրիստոսի ձեռքերից:
Լաց մի՛ լինիր, սիրելի՛ս ...
Ես քաշում եմ թաց մեխը
Քրիստոսի ճակատից:
Մի՛ հեռանա, սիրելի՛ս ...
Ես քաշում եմ սև մեխը
Քրիստոսի ոտքերից:
Հինգ մեխ է պետք, սիրելի՛ս ...
Աշխարհի հինգ ցամաքին,
Որ ես մեխեմ երկնքին:
Որ ես փրկեմ քեզ նորից
Ջրհեղեղի սարսափից,
Թե չէ խառն է ամեն ինչ:
Ինձ հասկացիր, սիրելի՛ս...
Տուր ինձ այն մեխը, որին
Գողանալով պահեցին:
- Քանզի ամեն մի ծնվող,
Ներսից իր սիրտը մեխած,
Գնում է այս աշխարհից:

